## Արձանագրություն N 2-3

### ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-25/14 ծածկագրով ՀՀ Գեղարքունիքի մարզի գյուղ Աղբերքի Շատջրեքի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման մնացորդային աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

09.09.2025թ.
ք.Երևան
ժամը 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Մնացականյան
Անդամներ՝ Ն. Ղազարյան
Ա. Նալբանդյան
Ա. Հյուսիսյան

Հանձնաժողովի քարտուղարի պարտականությունները կատարող՝ Գ. Հակոբյան

Բացակայում էր հանձնաժողովի անդամ՝ Էդ. Առուստամյանը

### 1. Իրավասու մարմինների կողմից ներկայացված եզրակացությունների և գնման ընթացակարգի մասնակցի հայտով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության մասին

---------------------------------------------------------------------------

(Հ. Մնացականյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ.

1.1.1 ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 67-րդ կետի համաձայն մասնակցի կողմից ներկայացված տվյալների իսկությունը ստուգելու նպատակով գնահատող հանձնաժողովը հարցում է կատարել իրավասու մարմիններին: Համաձայն Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված տեղեկատվության, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ վերջին 3 տարիների ընթացքում «ԼԵԳԵՆԴ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ն ունի 5 000 000 ՀՀ դրամը գերազանցող նախկին պայմանագրային պարտավորությունների ընթացքում պատվիրատուի կողմից հաշվարկված տույժ և (կամ) տուգանք 8 606 259 ՀՀ դրամի չափով:

1.1.2 «ԼԵԳԵՆԴ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ և «Վաղժան» ՍՊԸ կոնսորցիումի (այսուհետ՝ Կոնսորցիում) հայտով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Կոնսորցիումի հայտով ներկայացված չէ Կոնսորցիումի՝ համատեղ գործունեության պայմանագիրը:

1.1.3 Կոնսորցիումի հայտով ներկայացված համանման (նմանատիպ) պայմանագրերը չեն համապատասխանում իրավերի պահանջներին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ- 4 դեմ-0:*

## 2. Գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին

(Հ. Մնացականյան)

2.1 Հիմք ընդունելով Կարգի 67-րդ կետի և հրավերի 1-ին մասի 8.2 կետի պահանջները գնահատող հանձնաժողովը որոշեց Կոնսորցիումի հայտը գնահատել անբավարար և մերժել:

2.2 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-25/14 ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարվել է չկայացած:

*Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ ______________________ Հ. Մնացականյան

Անդամներ՝ ______________________ Ն. Ղազարյան

______________________ Ա. Նալբանդյան

______________________ Ա. Հյուսիսյան

Արձանագրությունը կազմեց հանձնաժողովի քարտուղարի պարտականությունները կատարող՝ ______________________ Գ. Հակոբյան